ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Հովհաննիսյան,*

Ի պատասխան վարչապետի աշխատակազմի ղեկավարի 02/16.5/32162-2024 գրության՝ հայտնում ենք, որ Սահմանադրական դատարանի կողմից ներկայացված 2025 թվականի բյուջետային հայտի 88 տոկոսը կազմում է Սահմանադրական դատարանի աշխատողների աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարները, մինչդեռ Սահմանադրական դատարանը լրացուցիչ աշխատուժի, հետևաբար հաստիքների ավելացման և դրանց ֆինանսավորման կարիք ունի: Մնացած 12 տոկոսն ուղղված է ապարատի պահպանման ընթացիկ ծախսերին:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ 2025թ-ի բյուջետային հայտի նվազեցումն ուղղակիորեն բացասաբար կանդրադառնա Սահմանադրական դատարանի բնականոն գործունեության վրա:

Հարգանքով՝

ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆ

0019, Երևան, Բաղրամյան պող. 10, հեռ. (374 11) 58 81 81, E-mail: a.dilanyan@concourt.am